

Հ Ո Ւ Ի Փ Ա Ս Տ Է Օ Ռ

(1822 - 1895)

ԻՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շար. Բազմ. 1953, թիւ 11-12, էջ 252)

Այդ օրերուն Փաստէօն ինքզինքը անհանգիստ կը զգար, 1868-ի Հոկտեմբեր 19 թուականը սուգի օրուան կը վերածուէր ամբողջ Պրանսայի համար: Փաստէօն առաւօտեան դէմ տկարութիւն մը կը զգար մարմնոյն ճախակողմը, ինչպէս նաեւ բուռն սարսուռներէ կը սարսէր իր ամբողջ էութիւնը:

Հակառակ այս մտահոգիչ երեւոյթներուն ու դոյալիճակին, Փաստէօն չուզեց զրկուիլ Գիտութեանց Կաճառի այդ օրուան նիստէն: Տիկ. Փաստէօն, արդարօրէն մտահոգուած, իր ամուսնոյն կ'ընկերանար մինչեւ Գիտութեանց Կաճառին գաւիթը, ուր՝ աղագեմական Պալատին հանդիպելով, կը խնդրէր իրմէ, որ հոգածու գտնուի ամուսնոյն, ու նիստէն ետք՝ հաճի մինչեւ տունը ընկերակցել: Փաստէօն իր զեկուցումը ընելով, Պալատի հետ տուն կը վերադառնար, երեկոյեան ժամը իննին թեթեւ մը ճաշելէ ետք՝ կը պառկէր: Հազիւ թէ անկողին մտած, տարօրինակ անհանգստութիւն մը կը զգար, խօսիլ կ'ուզէր՝ բայց չէր կրնար, շարժիլ կ'ուզէր՝ ձախ կողմը անդամալոյծ եղած էր: Այդ դժբախտ օրերուն Փաստէօնի տունը ուխտատեղիի մը կը վերածուէր, բարեկամներ ու զիտնականներ այցելութեան կու գային, ականաւոր բժիշկներ հերթովի կը գերէնէին մեծ զիտնականին սնարին կողքին, ու բոլորանուէր հոգածութիւն եւ խնամք կը շուայէին:

Ամէն ոք կը հարցնէր, թէ արդեօք պիտի մթադնէ՞ր այդ պայծառ միտքը, կամ պիտի անշարժան՞ր այն լեզուն՝ ուրկէ

յորդառատ աղբիւրի մը պէս՝ տասնեակ տարիներէ ի վեր կուռ տրամաբանութիւնը, սէրը եւ լուսեղ ճշմարտութիւնը հոսած էին: Բարեբախտաբար յանուն մարդկային գերազոյն շահերուն չիրականացան այդ չարազուշակ մտահոգութիւնները, ու Փաստէօն՝ կաթուածահար ըլլալէն քանի մը օր ետքը՝ կրկին խօսիլ կը սկսէր: Իր բարեկամներէն Սեն Բլեռ Տուրյի հետեւեալ խօսքերը կ'ըսէր. «Կը ցաւիմ որ պիտի մեռնիմ, հակառակ երկրիս աւելի օղտակար հանդիսանալու ցանկութեանս»: Փաստէօնի բարեկամը, զսպելով իր բուռն յուզումը կը պատասխանէր. «Ապահով եղէք որ պիտի առողջանաք, տակաւին ուրիշ հրաշալի դիւտեր պիտի ընէք ու երջանիկ օրեր պիտի ապրիք: Ձեզմէ աւելի տարեց ըլլալուս՝ ինծմէ աւելի պիտի ապրիք, խոստացէք որ դուք պիտի խօսիք դամբանականս, չառ կը ցանկամ այդ բանին, որովհետեւ վստահ եմ որ գովասանքներ պիտի ընէք ինձ համար»: Այս սրտակէզ խօսքերը միտքարական արտայայտութիւններ ըլլալէ աւելի, կատարեալ մարդարէութիւններ դարձան:

Փաստէօն ժամանակի ընթացքին մեծապէս կը բարեւաւորէր կաթուածէն, տակաւին երկար տարիներ ապրելով, իր մեծագոյն գիւտերը կ'ընէր, ու իր բարեկամին դամբանականը արտասանելու հարկադրանքին ալ կ'ենթարկուէր: Ծաղատագրին քմահաճոյքները որոշ օրէնքի մը ենթակայ չեն, երբեմն մահամերձը յարութիւն կ'առնէ, ու անոր փոխարէն՝ կայտառութեամբ զեզուն երիտասարդը կը մահանայ: Այսպիսի անակնկալներով լի է կեանքը: Փաստէօն, իր ապաքինումին ականատես հանդիսանալով, իր շուրջիններուն շարունակ կ'ըսէր. «Տակաւին բաներ ունիմ ընելիք, ի մէջ այլոց՝ խմորումներուն ու փոխանցիկ հիւանդութիւններուն դադարները պէտք է լուծել»:

«Ամբողջ աշխարհ մը կայ յայտնաբեր-

ուելիք»: Մինչ այդ, Փաստէօն կազդուութիւնը պէտք ունէր, աղամայ՝ իր սիրելիներուն խնդրանքին տեղի տալով՝ հիւանդութենէն երեք ամիս ետք գիւղ կը մեկնէր: Այս առաքեալին համար հանգիստ եւ հանգստութիւն բառերը կարծես դոյութիւն չունէին, այդ գիւղին մէջ իսկ, շուրջը քանի մը աշակերտներ հաւաքելով, փոքրիկ տարրալուծարան մը կը կազմակերպէր, ու շերամներու հիւանդութեան մասին բրած ուսումնասիրութիւնները կը շարունակէր: Քիչ ժամանակէն առողջութիւնը այն աստիճանի կը բարելաւուէր, որ 1869-ի սկիզբները արդէն առանց նեցուկի քանի մը քայլ ընելու ի վիճակի կ'ըլլար:

Սակայն այդ նախափորձերը առանց միջադէպի չանցան, օր մը ինչալով՝ քանի մը տեղէ կը վերաւորուէր, բարեբախտաբար առանց ծանր հետեւանքի:

Մօտաւորապէս տարին լրանալու վրայ էր, ու Փաստէօն Փարիզէն հեռու կ'ապրէր: Տիկին Փաստէօն Սեն Բլեռ Տուրյէն հետեւեալ լուրը կը ստանար. «Ուրախութենէս սիրտս կը զեղու, որովհետեւ ձեր ամուսինը շուտով ծերակոտական պիտի ընտրուի»: Վերջապէս կը հասնէր Փարիզ վերադառնալու պահը, 1869-ի Յունիս ամսոյն Փաստէօն Վիեննայի ճամբով Փարիզ կը մեկնէր:

Վիեննա Երթալու նպատակն էր՝ դերմանացի հոգաւոր գիտնական Լիէպիկը տեսնել, որուն, գիտական մարդին վրայ, Փաստէօնի դէմ մղած պայքարը ծանօթ էր ամէնուն: Լիէպիկ մեծ յարգանքով կ'ընդունէր Փաստէօնը, բայց կը մերժէր որ եւ է վիճաբանութեան մտնել անոր հետ, հակառակ որ Փաստէօնի բուռն փափաքն էր լուսարանել եւ համոզել իր հակառակորդը: Պրանսա վերադարձին, արդէն քաղաքական հորիզոնը ամպոտիլ ըստը կը զգար, ու շուտով կը ծագէր 1870-ի պատերազմը: Փաստէօնի բարեկամները,

նկատի ունենալով անոր տկար կազմը, կը համոզէին որ հեռանայ Փարիզէն, պաշարման արհաւիրքներէն զերծ մնալու համար:

Փաստէօն անսալով իր բարեկամներուն խնդրանքին, Սեպտեմբեր 5-ին Առաւուս կը մեկնէր, ուր պիտի մնար մինչեւ պատերազմի վերջաւորութեանը: Պաշարման ընթացքին, իր ընկերներուն եւ Փարիզի բնակչութեան քաջած տառապանքներէն ազդուած, սրտին խորքէն այսպէս կը բացաղանչէր. «Իրենց հայրենակիցներուն եւ զալիք սերունդներուն առջեւ մեծցած կը տեսնեմ զանոնք: Ինչո՞ւ ինձ ալ չվիճակուեցաւ մասնակից ըլլալու իրենց քաջած տառապանքներուն եւ վտանգներուն»:

Հաշտութենէն ետք, երբ Պրանսա կամաց կամաց խաղաղիւ կը սկսէր, Փաստէօն կրկին զինիի եւ վարեջուրի խմորումներու հարցերը մանրակրկիտ ուսումնասիրութեան կ'ենթարկէր:

Փաստէօնի կատարած յաջողական գիւտերը, եւ ի մասնաւորի բժշկական լուրջ հարցերու լուծումը, զինքը 1873-ին մինչեւ բժշկական կաճառը կ'առաջնորդէին, որուն անդամ կ'անուանուէր առանց բժիշկ ըլլալու: Ահա այդ բեմէն էր, որ տարօրինակ փայլով պիտի շողար Փաստէօնի հանճարը, հոն էր որ բուռն քննադատութիւններու եւ նախատինքներու պիտի ենթարկուէր, ու այդ տեղէն էր որ Փաստէօնի մեծ առաքելութիւնը պիտի յաղթանակէր, անսահման բարիք սերմանելով մարդկութեան: Բժշկական կաճառը Փաստէօնի համար եղաւ Գողգոթայ մը եւ յարութեան եւ յոյսի տաճարը: Փաստէօնի հակառակորդները դատապարտուած էին զինաթափ ըլլալու, որովհետեւ Փաստէօնի ընտրած ուղին ճշմարտութեան ճամբան էր: Ծուտով, բժշկական կաճառին անդամներուն մեծամասնութիւնը, Փաստէօնի յայտնութիւններուն յարելով, մեծապէս կը դնահատէին անոր կողմէ

հատել իմացական նուաճումներու զանազան մարդերու մէջ, բան մը՝ որ նոյն չափով կը պատկանի Կալիլէի, Բասքալի, Միքել-Անճելոյի եւ Մոլիերի: Բան մը՝ որ կը վսեմացնէ բանաստեղծը, խորաթափանց կը դարձնէ իմաստասէրը, կախարդութիւն կը պարզեւէ սերճարանին ու կը մարդարեացնէ գիտնականը: Գեղեցկութիւններու եւ ճշմարտութիւններու հեղինակաւորման այդ հասարակաց գիծը՝ դիտութեան, դրականութեան եւ գեղարուեստին ներշնչած այդ անսահմանելի ոգին՝ այդ աստուածային հոլորը, մենք ձեր անձին մէջ կեդրոնացած կը գտնենք եւ կը կոչենք՝ հանճար:

«Ոչ ոք չէ յաջողած յառաջանալ ա՛յնքան վստահօրէն բնութեան նախնական շրջանակներէն ներս՝ որքան դուք: Ձեր գիտական ասպարէզը կը նմանի լուսաւոր չաւիղի մը, որ կը թափանցէ անսահմանօրէն փոքրերու խոր մթութեան մէջ՝ դոյութեան ամենայնտին անդունդներէն ներս, ուրկէ ծնունդ կ'առնէ կեանքը: Դուք ո՛րքան երջանիկ էք, Տիար, որ ձեր արուեստին շնորհիւ, կը բախէք կենաց ալիքուն: Զմայլելի են ձեր կիրարկած դիտութիւնները: Հոն ոչինչ կը կորսուի»:

Պատերազմի արհաւիրքներէն վերականգնող Պրանսան, երբ առաջին անգամ ըլլալով Փաստէօնի տարեկան 12,000 Փրանքի նիւթական վարձատրութիւն մը կը յատկացնէր, ինքզինքը տակաւին պարտապան զգալով, կ'ըսէր. «Ազգը արդարապէս պիտի ըլլայ ապագային, աւելցընելով իր երախտիքին արտայայտութիւնը»:

Ազգը, տասնեակ մը տարիներ ետք, կը վերջիչէր այդ խոստումը, ու կը յարգէր զայն երկրորդ վարձատրութեամբ մը:

Անգղիական կառավարութիւնը, համաձայն վերաբերմունք մը ցոյց տուած էր ճեննէրի հանդէպ, որուն՝ մարդկութիւնը կը պարտի ծաղիկի պատուաստը:

Երկու անգամ կը վարձատրուէր ճեննէր, առաջինը՝ 1802-ին 10,000 սթերլինով, իսկ երկրորդը՝ 1807-ին 20,000 ոսկով: Ահա այս առիթով էր որ այդ օրերու մեծագոյն հոետորը՝ Փիթ՝ խորհրդարանի բեմէն կը բացառանչէր. «Քուէ-արկեցէ՛ք, տեսա՞ք, ձեր երախտիքը երբեք պիտի չկարենայ ճեննէրի մատուցած բարիքին բարձունքը հասնիլ»: Պրանսական կառավարութիւնն ալ, վերոյիշեալ բարիքին հակադէմ ներշնչութեամբ, 1884-ին Փաստէօնի յատկացուած կենսաթոշակին գումարը 25,000 Փրանքի կը բարձրացնէր: Կառավարութիւնը յանձնառու կ'ըլլար, Փաստէօնի մահէն ետք, այդ գումարը փոխանցել տրիկին Փաստէօնի եւ դաւաններուն:

Տասնեակ մը տարիներ առաջ, 1874-ին, Փաստէօնի պարգեւուած առաջին վարձատրութեան առիթով, յանուն կառավարութեան Փօլ Պեռ հետեւեալ կերպով արտայայտուած էր. «Երախտագիտական այսպիսի արտայայտութիւնները, ազգի մը կողմէ նուիրուած այն մարդոց՝ որ զինքը պայծառացուցած ու հարստացուցած են, հաւասար չափով պատուաբեր են՝ թէ՛ աղքատին եւ թէ՛ աղքատ մարդոց: Բայց մասնաւորապէս ազգերուն պատիւն ու շահը կը պահանջեն, որ այդ մարդոց կեանքը ոչ միայն հիացումի առարկայ դառնայ, այլ նաեւ ուրիշներուն նախանձը զրգռէ»:

Երկրորդ վարձատրութեան ներբողանքը կրկին Փօլ Պեռի վիճակուած ըլլալով, այն անգամ ալ հետեւեալ կերպով կ'արտայայտուէր. «Մեծապէս բարերար եւ առողջարար է հիացումը: Միթէ այս ամենագոր բարեմասնութիւնը չէ՞ որ կը դեղեցկացնէ, կը մխիթարէ եւ կը զօրացնէ կեանքը»:

Փաստէօն տակաւին տասը տարի եւս պիտի ապրէր: Մինչեւ իր մահուան օրը, իր կեանքը փառքի պանծացումը կը դառնար:

Երկրորդ վարձատրութեան անմիջա-

պէս ետքը, 1884-ին, Փաստէօն էտրիպուրի կը մեկնէր, այդ քաղաքին համալսարանին երեքհարկերամեայ սոնակատարութեանց ներկայ գտնուելու համար: Երբ Փրանսական պատուիրակութիւնը Լոնտոն կը ժամանէր, զարմանքով կը տեսնէր ի պատիւ իրեն մասնաշատուկ եւ չքեղ գնացք մը տրամադրուած ըլլալը: Այս անակնկալը, Եանկէր անունով դարեջուրի ծանօթ գործարանատիրոջ մը կողմէ կատարուած էր, փառաւորելու համար Փաստէօնի անունն ու ներկայութիւնը, որուն շատ բան կը պարտէր դարեջուրի ճարտարարուեստը: Փաստէօնի էտրիպուրիկէն մեկնած օրը, տեղական թերթերու ճակտին հետեւեալ վերնագիրը կարելի էր կարդալ. «Ի յիշատակ Փաստէօնի էտրիպուրի բնակութեան, տակ Փաստէօնի էտրիպուրի բնակութեան Պարոն Եանկէր 500 ոսկի կը նուիրէ էտրիպուրի համալսարանին»:

Այս սոնակատարութիւններէն անմիջապէս ետք, Գորենհակի մէջ բժշկական միջազգային համաժողով մը կը գումարուէր: Այս կարգի գիտական հանդիսակա-

տարութեանց Պրանսայի ներկայացուցիչն ըլլալու պատիւը միշտ Փաստէօնի կը վերապահուէր:

Փաստէօնի գաւազնը այդ քաղաքին Փրանսական հիւպատոսարանին քարտուղարը ըլլալուն, մեծ գիտնականին համար կրկնակ հաճոյք մըն էր մասնակից ըլլալ այդ համաժողովին: Բացման օրը, աննախընթաց ոգեւորութիւն կը պատճառէր Փաստէօնի ներկայութիւնը:

Ան կը ներկայացուէր Տանիմարքայի եւ Յունաստանի թագաւորներուն, որոնք ներկայ էին հանդէսին: Երկու դահակալները՝ չեղելով արքունիքի բարձրէն նախաձեռնարկ կ'ըլլային Փաստէօնը դիմաւորելու եւ բարեւելու: Երբ այդ օրերուն Փաստէօնի փառքը իր գէնիթին կը հասնէր, իր կեանքն ալ կամաց կամաց դէպի մայրամուտը կը չքէր:

Բժշ. Պ. ՄԻՍԱԲԱՆ

(Շարունակելի)

Վ Ի Պ Ա Կ

Փաստէօն յօդուածաշարին «Բազմավէպ»-ի նախորդ սխառնակներուն մէջ ակամայ սպրդած են տպագրական հետեւեալ սխալները.

1953 - թիւ	Էջ	Վերին ՏՈՂ.	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ.
8 - 10	171	35 - 36	կարենալ համար յաղթանակի տակ իր բիրեղ վարդապետութիւնը	կարենալ յաղթանակի տակ իր բիրեղ վարդապետութիւնը
8 - 10	173	3	Այս խմբումով	Այս խմբով
8 - 10	173	31	Եւ թէ անէութենէն	Եւ ոչ թէ անէութենէն